Մարդու իրավունքների մարտահրավերները հոգեբուժության բնագավառում

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող քաղաքացիների նկատմամբ Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը համակարգային փոփոխություններ չի կրել: Շարունակվում է այս քաղաքացիների նկատմամբ հոգեբուժարաններում բուժման ավանդական մեթոդների կիրառումը: Ճիշտ է 2004 թ. ընդունվել է «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքը, սակայն լուրջ մտահոգություններ կան հոգեկան առողջության խնդիրներ ունեցող քաղաքացիների հոսպիտալացման, բուժման և դուրսգրման ոչ միայն սահմանված ընթացակարգերի, այլ նաև նրանց կիրառման հետ կապված:

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ մարդու իրավունքների պաշտպանության տեսակետից լուրջ մտահոգություններ են կան՝ կապված հոգեկան առողջության խնդիրներ ունեցող քաղաքացու նկատմամբ ոչ հոժարակամ հոսպիտալացման կիրառման ինստիտուտի հետ: Ոչ միայն կասկածելի է հոգեբուժական հաստատություններում ոչ հոժարակամ հոսպիտալացման կիրառման վերաբերյալ շատ քիչ թվով դատական որոշումների փաստը, այլև ինքնին դատաքննության ընթացքը: Ըստ էության դատարանի քննության առարկա է հանդիսանում տվյալ անձի հոգեկան վիճակի մասին հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությունը, որը կազմվում է տվյալ հաստատության հոգեբույժների կողմից:

Միայն 2013 թ. ապրիլի 30-ին «Հոգեբուժական օգնության մասին», ինչպես նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքներում փոփոխության արդյունքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող քաղաքացիները ապահովվեցին հանրային պաշտպանի միջոցով պետության կողմից տրամադրվող իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությամբ:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող քաղաքացիների նկատմամբ ոչ պատշաճ պետական քաղաքականության էության մասին է վկայում հոգեբուժարաններում մահացության դեպքերով ոչ պատշաճ քննություն իրականացնելու պրակտիկան: 2006-2010 թթ. մահացության 163 դեպքերից միայն 44 դեպքով է նյութեր նախապատրաստվել իրավապահ մարմինների կողմից, սակայն ոչ մի դեպքով քրեական գործ չի հարուցվել: Ի դեպ պետք է նշել, որ ՀՀ հոգեբուժարաններում արձանագրված մահերի 98 % տեղի են ունենում սոմատիկ հիվանդությունների պատճառով[1]: Սա վկայում է հոգեբուժական հաստատություններում բնակվողների սոմատիկ հիվանդությունների ոչ պատշաճ բուժման մասին, որ հանդիսանում է վատ վերաբերմունքի դրսևորում:

Մշտադիտարկումները վկայում են, որ ստացիոնար բուժման ընթացքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող քաղաքացիների նկատմամբ դրսևորվում է մարդու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, որը արտահայտվում է բռնություններով, անմարդկային վերաբերմունքի այլ

[1] Ըստ հոգեբույժների միջազգային ասոցացիայի միջազգային հարաբերակցությունը 60 % է

դրսևորումներով: Այս տեսակետից մտահոգիչ են այսպես կոչված անձնակազմի սանիտարական համալրումը ոչ պատրաստի կադրերով, բժշկական անձնակազմի կողմից նոր մեթոդների և տեխնոլոգիաների չտիրապետելը, այդ թվում պետության կողմից նորագույն դեղամիջոցների անհրաժեշտ չափաքանակով չապահովումը: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող քաղաքացիների մարդկային արժանապատվության նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորման տեսակետից պետությունը պատշաճ և արդյունավետ աշխատանք չի իրականացնում ոչ միայն նրանց խնդիրների վերաբերյալ հանրային իրազեկման ուղղությամբ, այլ նաև խտրականության դրսևորումների կանխարգելման ուղղությամբ:

Մարդու իրավունքների տեսակետից ռիսկային է հոգեբուժական հաստատությունների ֆինանսավորման քաղաքականությունը: Հոգեբուժարանների ֆինանսավորման չափի կախվածությունը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող քաղաքացիների թվից հանգեցնում է նրան, որ հոգեբուժարանը շահագրգռված է անընդհատ ունենալ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող քաղաքացիներ: Դիտարկելով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող քաղաքացիների թվաճը վերջին 3 տարիներում /առաջին անգամ բացահայտված ախտորոշումով գրանցված հոգեկան առողջության խնդիրներ ունեցող քաղաքացիների թվաքանակը 2008 թ. 2549 է, 2009 թ.՝ 2689 և 2010 թ.՝ 3584/՝ կարող ենք եզրակացնել, որ պետության կողմից հոգեկան առողջության բնագավառում կիրառվող քաղաքականությունը գոյություն ունեցող մոտեցումների շրջանակում անարդյունավետ է: